## Հաղթահարելով տարաձայնությունները. Հաշտարարության դերը շրջակա միջավայրին առնչվող վեճերում

Բնապահպանական վեճերը գնալով ավելի արդիական են դառնում այսօրվա աշխարհում, ինչը բխում է բնական ռեսուրսների, հողերի օգտագործման, աղտոտման և պահպանման շուրջ մրցակցող շահերից: Այս վեճերում հաճախ ներգրավված են տարբեր շահագրգիռ կողմեր, որոնք ունեն հակադրվող առաջնահերթություններ, ինչը բարդացնում է դրանց հանգուցալուծումը: Բնապահպանական հաշտարարությունն արդյունավետ գործիք է այս բարդ խնդիրները լուծելու համար: Այն նպաստում է երկխոսության, համագործակցության ու կայուն լուծումների հաստատմանը: Այս հոդվածում ԱՀՀԿ-ն քննարկում է բնապահպանական հաշտարարության գաղափարը, դրա առավելությունները և դերը շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող վեճերի լուծման գործում:

## Բնապահպանական հաշտարարության առանձնահատկությունները

Բնապահպանական հաշտարարությունը համագործակցային գործընթաց է, որտեղ չեզոք երրորդ կողմը՝ հաշտարարը, համակարգում է հաղորդակցությունը և բանակցությունները բնապահպանական վեճերի մեջ ներգրավված շահագրգիռ կողմերի միջև: Ի տարբերություն դատավարությանը՝ բնապահպանական հաշտարարությունը շեշտը դնում է կոնսենսուսի ձևավորման և կամավոր կերպով համաձայնությունների հասնելու վրա: Հաշտարարները կողմերին օգնում են հասկանալ միմյանց տեսակետները և մշակել բնապահպանական խնդիրների փոխշահավետ լուծումներ՝ միաժամանակ բավարարելով շահագրգիռ կողմերի կարիքները:

Բնապահպանական վեճերը հաճախ ծագում են շինարարական և կառուցապատման նախագծերից, որոնք կարող են էապես փոխել լանդշաֆտը՝ ազդելով շրջակա միջավայրի առանձնահատկությունների վրա: Վեճերը ծագում են նաև շրջակա միջավայրին հասցված վնասի հայտնաբերումից, որոնք վտանգ են ներկայացնում մարդու առողջության համար: Այս վեճերը սովորաբար տեղի են ունենում սահմանափակ բնական ռեսուրսների օգտագործման շուրջ, որտեղ շահագրգիռ կողմերը հակընդդեմ տեսակետներ ունեն դրանց շահագործման, սեփականության և պահպանման միջոցառումների վերաբերյալ:

Վեճերը բնապահպանական պիտակ են ստանում, երբ դրանք վերաբերում են բնական ռեսուրսների, օդի, հողի կամ ջրի որակի վրա մարդու գործունեության ենթադրյալ բացասական ազդեցությանը և մարդու առողջության վրա դրանից բխող հետևանքներին: Բացի այդ, վեճերը ծագում են մարդու վնասակար գործունեությունից

շրջակա միջավայրը պաշտպանելու նպատակով կիրառվող միջոցների և ընթացակարգերի շուրջ:

Բազմատեսակ բնապահպանական վեճերի ուղղակի հետևանքը ստիպում է անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր իրավիճակի նկատմամբ՝ հաշվի առնելով դրա բարդությունն ու առանձնահատկությունները: Այս մոտեցումը ենթադրում է, որ կողմերը պետք է զերծ մնան ընդհանրացման կամ վեճի առարկան անցյալի փորձի շրջանակներում դիտարկելու գայթակղությունից, որոնք կարող են չհամապատասխանել տվյալ իրավիճակին: Յուրաքանչյուր բնապահպանական վեճ պահանջում է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունը և խուսափելով վեճերի միջև անհիմն համեմատություններից կամ ընդհանրացումներից: Այս համատեքստում հաշտարարությունը հանդես է գալիս որպես զգայուն և կենսական կարևորություն ունեցող բնապահպանական ոլորտում բազմաթիվ շահերի վերաբերող բարդ խնդիրների լուծման արդյունավետ մեթոդ:

## Միջազգային հայացքը բնապահպանական հաշտարարությանը

Բնապահպանական հաշտարարությունը բարդ վեճերի լուծման և կայուն արդյունքների խթանման կայացած գործիք է: Ամբողջ աշխարհով մեկ երկրներն իրականացրել են հաշտարարության ծրագրեր և նախաձեռնություններ՝ բնապահպանական վեճերի արդյունավետ լուծման նպատակով: Օրինակ, Միացյալ Նահանգներում, **Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունը (EPA),** իր **Բնապահպանական հաշտարարության ծրագրի** միջոցով, բնապահպանական վեճերի լուծման համար կիրառում է հաշտարարությունը: Ավստրալիան ևս ներդրել է բնապահպանական հաշտարարության ծրագրեր ինչպես դաշնային, այնպես էլ նահանգային մակարդակներում՝ լուծելու հողօգտագործման, բնական ռեսուրսների կառավարման և պահպանման հետ կապված վեճերը:

Ավելին, միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են **ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP)**, ակտիվորեն խթանում է հաշտարարության և այլ համագործակցային մոտեցումների կիրառումը գլոբալ մասշտաբով բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու համար: **UNEP-ի Էկոլոգիական իրավունք և կոնվենցիաներ բաժինը** աջակցում է կարողությունների հզորացման նախաձեռնություններին և նպաստում անդամ երկրների միջև բնապահպանական հաշտարարության լավագույն փորձի փոխանակմանը:

Եվրոպայում բնական ռեսուրսների օգտագործման և պաշտպանության հետ կապված շահագրգիռ կողմերի միջև լարվածությունը աճում է տարբեր զարգացումների պատճառով, ինչպիսիք են կլիմայի և կենսաբազմազանության հետ կապված ճգնաժամերը: Ընդունելով շրջակա միջավայրի աջակցման և հաշտարարության

անհրաժեշտությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ, վերջերս ընդունվեց նման միջամտությունների անհրաժեշտությունը եվրոպական համատեքստում: Այս ջանքերում կենտրոնական տեղ է զբաղեցնում **Էկոլոգիական հաշտարարության նախաձեռնությունը (Environmental Mediation Initiative)**՝ բնապահպանական վեճերի հաշտարարության և համակարգման գործում մասնագիտացած կազմակերպությունների եվրոպական ցանց:

Հարավային Կորեայում բնապահպանական վեճերի լուծումը հաճախ տեղի է ունենում վարչական մարմինների միջոցով: Բնապահպանական վեճերի լուծման հանձնաժողովը, որը Շրջակա միջավայրի նախարարությանն առընթեր քվազի-դատական կառույց է, հիմնականում հաշտարարությունն օգտագործում է բնապահպանական բողոքներն արագ, արդարացի և արդյունավետ լուծելու համար: 12 տարվա ընթացքում ընդհանուր առմամբ արձանագրվել է 1345 բնապահպանական վեճ, որի արդյունքում ստացվել է 1016 դրական լուծում: Այս հաջողության մակարդակը հավասար է մոտավորապես **75,5%**-ի:

Հետևյալ աղյուսակն ուրվագծում է տարբեր ոլորտներում առկա վեճերի օրինակները՝ լույս սփռելով խնդիրների բազմազանության վրա:

| Ոլորտ | Վեճերի օրինակներ |
|---|---|
| Միջուկային էներգիա | Խնդիրները ծագում են ուրանի արդյունահանման, ատոմակայանների շահագործման և միջուկային թափոնների կառավարման հետ կապված: |
| Օգտակար հանածոների արդյունահանում և շինանյութեր | Վեճը կարող է ծագել այնպիսի գործողություններից, ինչպիսիք են օգտակար հանածոների արդյունահանումը, վերամշակումը և պոչամբարների կառավարումը, ինչպես նաև շինանյութերի արդյունահանումը: |
| Թափոնների կառավարում | Վեճերը կարող են ծագել թափոնների հեռացման, թափոնների կառավարման սեփականաշնորհման, ինչպես նաև աղբավայրերի և աղբի այրման հետ կապված կոնֆլիկտների արդյունքում: |
| Կենսազանգված և հողային վեճեր | Հողային վեճեր կարող են առաջանալ ծառերի տնկարկների համար հողերի ձեռքբերման, անտառահատումների, գյուղատնտեսական թունավոր նյութերի, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) և գյուղատնտեսական վառելիքի հետ կապված կոնֆլիկտների պատճառով: |
| Հանածո վառելանյութեր և կլիմայական արդարադատություն | Վեճերի շարքում են նավթի, գազի և ածխի արդյունահանման, կլիմայի փոփոխության և էներգիայի վերականգնվող աղբյուրների շուրջ քննարկումները: |
| Ենթակառուցվածքներ և քաղաքաշինություն | Լարվածություններ կարող են առաջանալ մեծածավալ ենթակառուցվածքային նախագծերից, ինչպիսիք են |

| | |
|---|---|
| | արագընթաց գնացքները, օդանավակայանները և քաղաքաշինական նախաձեռնությունները: |
| Ջրային տնտեսություն | Վեճերը կարող են ծագել ամբարտակների կառուցման, ջրի տեղափոխման, ջրատար հորիզոնների քայքայման և ջրի աղազերծման նախագծերի շուրջ քննարկումներից: |
| Կենսաբազմազանության պահպանում | Խնդիրների շարքում կարող են լինել ինվազիվ տեսակների, պահպանության պրակտիկայի և մարդու և վայրի բնության միջև կոնֆլիկտները: |
| Արդյունաբերական և հանրային ծառայությունների վեճեր | Վեճերը կարող են ծագել արդյունաբերական արտանետումների, աղտոտման և հանրային ծառայությունների, ինչպիսիք են ջրի և էլեկտրաէներգիայի հետ կապված կոնֆլիկտները: |
| Զբոսաշրջության հանգստի վեճեր | Վեճերը կարող են ծագել զբոսաշրջային վայրերի ստեղծման և բնական միջավայրերի ու տեղական համայնքների վրա ազդող գործողությունների պատճառով: |

## Կայուն լուծումների բացահայտում

Բնապահպանական հաշտարարությունն առաջարկում է վեճերի լուծման ուղի՝ միաժամանակ խթանելով համագործակցությունը և պահպանելով էկոհամակարգերը: Նպաստելով երկխոսությանը և համաձայնության ձևավորմանը՝ հաշտարարությունը ճանապարհ է հարթում փոխշահավետ արդյունքների համար, որոնք կարևորում են շրջակա միջավայրի պաշտպանությունը և շահագրգիռ կողմերի շահերը: Բնապահպանական հաշտարարության առավելությունները ներառում են.

1. **Համագործակցություն և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն.** Բնապահպանական հաշտարարությունը խթանում է համագործակցությունը տարբեր շահեր ունեցող շահագրգիռ կողմերի միջև, այդ թվում՝ պետական մարմիններ, բիզնես, համայնքներ և բնապահպանական կազմակերպություններ: Հաշտարարությունը խթանում է սեփականատիրության և կոլեկտիվ պատասխանատվության զգացումը բնապահպանական խնդիրների համար՝ շահագրգիռ կողմերին ներգրավելով երկխոսության և որոշումների կայացման մեջ:

2. **Անհատական լուծումներ.** Ի տարբերություն կարգավորող միանման մոտեցումների՝ բնապահպանական հաշտարարությունը թույլ է տալիս մշակել անհատական լուծումներ՝ հարմարեցված կոնկրետ համատեքստին և ներգրավված կողմերի մտահոգություններին: Հաշտարարները նպաստում են խնդիրների լուծման մեջ ստեղծագործական մոտեցումների կիրառմանը՝ օգնելով շահագրգիռ կողմերին ուսումնասիրել նորարարական ռազմավարություններ, որոնք հավասարակշռում են շրջակա միջավայրի

պաշտպանությունը տնտեսական զարգացման և համայնքի բարեկեցության հետ:

3. **Կոնֆլիկտների կանխարգելում և լուծում.** Բնապահպանական հաշտարարությունը ոչ միայն լուծում է առկա կոնֆլիկտները, այլ նաև օգնում է կանխել ապագա վեճերը՝ լուծելով խորքային խնդիրները և բարելավելով շփումն ու վստահությունը կողմերի միջև: Խթանելով կառուցողական հարաբերություններ և համատեղ խնդիրների լուծում՝ հաշտարարությունը նպաստում է երկարաժամկետ բնապահպանական կայունությանը:

4. **Արդյունավետություն և ծախսախնայում:** Զգձգվող դատական վարույթների կամ կարգավորման գործընթացների համեմատ՝ բնապահպանական հաշտարարությունն առաջարկում է վեճերը լուծելու ավելի արդյունավետ և ծախսախնայող միջոց: Հաշտարարության լսումները կարող են նշանակվել անհապաղ, իսկ գործընթացը սովորաբար ներառում է ավելի քիչ իրավական ծախսեր և վարչական բեռ՝ խնայելով ժամանակ և ռեսուրսներ բոլոր ներգրավված կողմերի համար:

## Բնապահպանական հաշտարարության գործընթացը

Բնապահպանական հաշտարարության հաջող իրականացումը պահանջում է համագործակցային և ներառական մոտեցում՝ հետևյալ առանցքային քայլերով.

1. Հաշտարարության գործընթացի սկզբում համապատասխան շահագրգիռ կողմերի բացահայտումն ու ներգրավումը կարևոր է լայն մասնակցություն և բազմազան տեսակետներ ապահովելու համար: Շահագրգիռ կողմերը պետք է ներկայացնեն մի շարք շահեր, ներառյալ բնապահպանական, տնտեսական, սոցիալական և մշակութային մտահոգությունները:

2. Բնապահպանական հաշտարարության հաջողության համար էական նշանակություն ունի որակավորված հաշտարարի ընտրությունը, որն ունի փորձառություն բնապահպանական հարցերում և վեճերի լուծման գործում: Հաշտարարները պետք է ունենան հաղորդակցման բարձրակարգ հմտություններ, մշակութային կոմպետենցիաներ և փոխհամաձայնության ձևավորման ու կայունության խթանման հանձնառություն:

3. Թափանցիկ և մատչելի տեղեկատվությունն էական նշանակություն ունի բնապահպանական հաշտարարության հարցում տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Կողմերը պետք է փոխանակեն համապատասխան

տվյալներ, գիտական հետազոտություններ և տեխնիկական փորձաքննություն՝ նպաստելու կառուցողական երկխոսությանը և խնդիրների լուծմանը:

4. Բնապահպանական հաշտարարության միջոցով պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո անչափ կարևոր է ապահովել դրանց արդյունավետ իրականացումը և մոնիտորինգը: Կողմերը պետք է մեխանիզմներ ներդնեն համապատասխանության, շարունակական հաղորդակցության և ճկուն կառավարման համար՝ փոփոխվող շրջակա միջավայրի պայմաններին և շահագրգիռ կողմերի կարիքներին արձագանքելու նպատակով:

## Եզրակացություն

Բնապահպանական հաշտարարությունն առաջարկում է համագործակցային և ներառական մոտեցում բնապահպանական բարդ վեճերի լուծման, երկխոսության խթանման, կոնսենսուսի ձևավորման և կայուն լուծումների համար: Ներգրավելով շահագրգիռ կողմերին, խթանելով ստեղծագործականությունը և հավասարակշռելով հակադիր շահերը՝ հաշտարարությունը նպաստում է շրջակա միջավայրի ռացիոնալ օգտագործմանն ու պահպանմանը: Քանի որ բնապահպանական մարտահրավերները շարունակում են զարգանալ, հաշտարարության դերն այս ոլորտում դառնում է ավելի ու ավելի կենսական՝ խթանելով ճկունությունը, համագործակցությունը և համատեղ գործողությունները դեպի ավելի կայուն ապագա:

+374 11 201 410

info@amca.am

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 51, թիվ 47 տարածք

Աղբյուրներ.

Catherine Choquette, Véronique Fraser (eds), *Environmental Mediation an International Survey* (2018 Routledge).

John S. Dryzek, Susan Hunter, (1987*)* Environmental Mediation for International Problems, *International Studies Quarterly,* Vol. 31, No. 1, pp. 87-102. Available at: http://www.jstor.org/stable/2600661

Roger Sidaway, *Resolving Environmental Disputes from Conflict to Consensus*, (2005 Routlegde).

John Harrison, (1997), Environmental Mediation: The Ethical and Constitutional Dimension, *Journal of Environmental Law,* Vol. 9, No. 1 pp. 79-102. Available at: https://www.jstor.org/stable/44248115

Bruce Stiftel and Neil G. Sipe, Mediation of Environmental Enforcement: Overcoming Inertia, 1992 J. Disp. Resol. (1992) Available at: https://scholarship.law.missouri.edu/jdr/vol1992/iss2/2

A Transformative Approach to The Mediation of Environmental Conflicts: From Entry to Exit Points, Environmental Mediation Initiative, 2023. Available at: https://lechtalps.com/wp-content/uploads/2023/09/2-Ein-transformativer-Ansatz-zur-Mediation-von-Umweltkonflikten.pdf.

Deborah Shmueli, Sanda Kaufman, (2006) Environmental Mediation, The Jerusalem Institute for Israel Studies CEPSS, no. 24.